

2766

26

---

R -19

1889

Printed in Turkey

ԲԱՆԻ ՄԸ ԽՕՍՔԵՐ

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԱՌԹԻԻ



معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۱۵ جادی الآخر ۳۰۷  
و ۲۴ کانون ثانی ۳۰۵ تاریخی و ۹۹۴ نومروی  
رخصتنامه سیله نشر اولمشدر

مصارف آمریقان مسیوز شرکتی طرفدن تسویه اولندرق  
طبع اولمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ

ՏԱԿՈՐ ՊՅՍՃԵԱՆ

1889

26  
—  
P. 19

1723



2 010

23408

15  
F-19

4


5

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔԵՐ

## ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԱՌԹԻԻ

Ասկէ քանի մը տարի առաջ երիտա-  
 սարդի մը հարկ եղաւ գիշերը ճամբորդել  
 երթալու համար մղոններով հեռի տեղ մը :  
 Ճամբան կ'անցնէր ամայի դաշտէ մը ուր  
 երիտասարդը կրնար շատ դիւրաւ կոր-  
 սընցունել իւր ուղին : Մինչ դեռ ճամբայ  
 ելած չէր, բարեկամ մը ցուցնելով պայ-  
 ծառ աստղ մը որ սկսած էր բարձրանալ  
 հորիզոնէն վեր , ըսաւ անոր , « Ուղղակի  
 յառաջ գնա , աչքդ հաստատելով այդ աստ-  
 ղին վրայ , եւ բնաւ պիտի չսխալիս » Ե-  
 րիտասարդը բռնեց խրատը , եւ քանի մը  
 ժամէն դտնուեցաւ մօտ այն տեղւոյն ուր  
 կը փափաքէր հասնիլ :

Նոր տարուան սկիզբը մեր երթալու  
 ճամբան ինձ կը թուի թէ շատ նման է այդ  
 երիտասարդին ճամբուն : Մենք չենք կրնար  
 տեսնել մեր ճամբան : Անոր վրայ դեռ ոչ ոք  
 կոխած է , եւ մենք ենթակայ ենք մոլորելու :



777  
31  
25 11 C

Բայց չնորհակալ ենք Աստուծոյ որ կայ առաջնորդող Աստղ մը : Սուրբ Գիրքն է լոյս մեզ առաջնորդող : “Մեր ոտքերուն ճրագ է , ու մեր շաւիղներուն լոյս :” “Կըրնայ խնայտուն ընել փրկուելու Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը :” Այն որ կը սեւեռէ իւր հաւատոյ աչքը այս Աստղին վրայ , չմոլորիր իւր ճամբուն մէջ : Ապահով կերպով կ'անցնի անհետ ճամբուն ամալի անապատէն : Ապահով կերպով կը հասնի հանգստաւէտ նաւահանգիստը երբ ճամբան կ'աւարտի :

Սէյլան կղզւոյն մէջ Քրիստոսի մէկ ծառան որ այցելեց երկրին հեռաւոր կողմը , լսեց օտարական ձերուներոյ մը վրայ որ շատ տարբեր էր իւր միւս հայրենակիցներէն : Կը մերժէր նա երկրպագել կուռքերուն . եւ հակառակ սուտ խօսելու ունակութեան անոնց որոց մէջ կը բնակէր , ինք բնաւ չէր խօսեր սուտ : Քրիստոսի վերոյիշեալ ծառան այցելութիւն մը տուաւ ձերուներոյն : Ասկէ քառասուն տարի առաջ երբ նա կը կենար ի Քոլոմպոյ , ընդունած էր Առակաց Գիրքէն օրինակ մը : Ի բերան սորված էր զայն սկիզբէն մինչեւ վերջը . գիտէր անոր մէն մի զը-

լուխը եւ մէն մի համարը : Ի գործ կը դնէր անոր տուած պատուէրները : Սորված էր անկէ թէ Աստուած է սուրբ , արդար եւ ողորմած : Կ'աղօթէր որ Աստուած զրկէր իրեն աւելի լոյս եւ աւելի գիտութիւն : Լսուեցաւ անոր աղօթքը : Լիովին հրահանգուեցաւ Աւետարանական ճշմարտութեան մէջ , եւ քիչ ետքը մկրտուեցաւ հաւատով Որդւոյն Աստուծոյ , որ սիրեց զնա եւ իւր անձը մատնեց անոր համար :

Եթէ Հին Կտակարանի միայն մէկ գիրքին տուած լոյսն այսպէս էր , որչափ չնորհակալութեամբ պարտիմք գործածել ամբողջ ներշնչեալ Մատեանը , իւր սքանչելի պատմութեամբք Աստուծոյ սիրոյն ի Քրիստոս :

Վաղեմի հեթանոս փրկիստիպաք դարերով ջանացին գտնել մարդկային իմաստութեամբ Աստուծոյ գոյութեան եւ մարդու ճշմարիտ երջանկութեան զաղանիքը . բայց միայն սա՛ հասկցան թէ ինչպէս թանձր էր խաւարը զոր ի զուր կ'աշխատէին փարատել : Այժմ կ'ելլեն մարդիկ որ կ'ուզեն խախտել մեր հաւատքը Աստուծոյ օրհնեալ Խօսքին վրայէն , եւ հրատարակել թէ մարդկային բանականու-

թիւնն է մի միայն առաջնորդը որուն պարտիւմը հետեւիլ Բայց մարդուս բանակահունքիւնն ի՛նչ բան աւելի կրնայ ընել քան որչափ ըրաւ այն մարդոց որք Քրիստոսի աշխարհ դալէն առաջ կ'ապրէին աշխարհիս խաւար օրերուն մէջ :

Առանց Աստուծոյ իջուցին անսուտ յայտնութեանը ո՛ր կրնանք գտնել ստոյգ ծանօթութիւն հանդերձեալ վիճակի մը վրայ, Աստուծոյ ստորոգելեաց վրայ, մեղաց թողութեան վրայ, եւ որ եւ իցէ մնայուն մխիթարութեան վրայ մեր փորձութեանց եւ վշտաց ներկայ վիճակին մէջ : Բայց ձեռքդ առ Ճշմարտութեան կանխեղը, հաւատա թէ այն է նոյն իսկ կենդանի Աստուծոյ իջուցը, թէ Հոգին Սուրբ կը խօսի քեզի անոր մէջ եւ անոր միջոցաւ, եւ ահա այն ատեն պիտի լեցուիս յուսով, յոռաշիկայ տարին ինչ ալ բերէ իւր հետ :

Թերեւս այս տարին բերէ քեզի զօրաւոր համոզում թէ մեղք եւ յանցանք ունիս : Թերեւս տեսնես ինչ որ տակաւին չէիր տեսած թէ ի՛նչպէս մեծ է վտանգդ եւ ո՛րչափ մօտեցած ես յաւիտենականութեան մինչ անպատրաստ կը գտնուիս անոր : Բայց նայէ այն Աստուծոյն : Կարգա իջու-

քը : «Ահա Աստուծոյ Գառը՝ որ աշխարհի մեղքը կը վերցունէ :» «Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ :»

Երբ կը համոզուինք մեր մեղաւոր ըլլալուն, ճշմարիտ մխիթարութեան ճամբան է ամենէն ցած տեղը կենալ, եւ յետոյ ապաւինիլ միայն եւ բոլորովին Քրիստոսի, որ մեռաւ իբրեւ քառութիւն մեղաց, եւ այժմ կենդանի է մեզի համար բարեխօս ըլլալու, քաջածանօթ եւ շատ անգամ կրկնուած հետեւեալ խօսքերուն ոգևովը,

Ինչպէս որ եմ, չսպասելով  
Հոգիս սրբել պարապ յուսով,  
Քու արիւնիդ լոկ նայելով,  
Գառն Աստուծոյ, քեզի կու գամ :

Թերեւս այս տարի կրես առաջին մեծ կորուստդ : Այդ բանը կրնայ բերել քեզի իւր հետ գրեթէ անտանելի թախճութիւն եւ վճատութիւն : Թերեւս քեզի պիտի թուի թէ դուն ես անապատին մէջ մինակ կանգնած սիւն մը որոյ գէմ կը փչեն բոլոր փոթորիկները : Բայց եթէ ըստ օրինի

գործածես Աստուծոյ Խօսքը, պիտի չմնաս բոլորովին մինակ : Աստուծոյ Խօսքը կ'ըսէ մեզի թէ մեր վարդապետն ի՛նչպէս իւր մինակ գտնուած ժամանակը ըսաւ թէ չէր մինակ , վասն զի Հայրը անոր հետ էր : Կը խօսի Տէրջը ժողովուրդը շրջապատող հրեշտակներու վրայ : Կ'ըսէ մեզի թէ Քրիստոնեան ի՛նչպէս Աստուծոյ եկեղեցւոյն մէկ անդամն է , եւ թէ բոլոր հաւատացելոց երանելի ընկերութեան մէջ կայ համակրանք եւ հաղորդակցութիւն որոյ վրայ աշխարհ բան մը չգիտեր : Ի վերջան դամենայն , կը խօսի Էակի մը վրայ որ է իբրեւ հայր եւ մայր , եղբայր եւ քոյր , բարեկամ եւ ընկեր , պահապան եւ փրկիչ ամենէն տկարին անգամ այնպիսեաց որք կ'ապաւինին Անոր որ ըսած է , « Բնաւ քեզ պիտի չթողում , բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ » :

Կամ թերեւս քու փորձութիւնդ առնուելիչ կերպարան մը : Թերեւս կրես չբաւորութիւն եւ տառապանք : Թերեւս տաքնապիս քու առողջութեանդ կամ ապրուստի միջոցներուդ մասին , կամ քու զիրքիդ ինչ ինչ փոփոխութեանց պատճառաւ : Բայց դարձեալ , Աստուծոյ Խօսքը կու տայ

լոյս : Կը յիշեցունէ քեզի թէ կայ զքեզ սիրող Նախախնամութիւն մը որ կը տնօրինէ քու մէն մի քայլերդ . եւ թէ՛ եթէ դու մի՛այն յանձնես քու ճամբադ Աստուծոյ , նա պիտի ուղղէ քու վնասքդ :

Բոլոր դժուարութեանցդ մէջ կոթնէ Աստուծոյ Խօսքին եւ վստահէ անոր նախախնամական հոգածութեան :

Բայց ո՛վ գիտէ , թերեւս այս տարի քու դուռը զարնէ վերջին թշնամին : Բայց մինչեւ անգամ եթէ պատահի այդ , եթէ Քրիստոսի ծառայ ես , պէտք չէ որ վախնաս : Աստուծոյ Խօսքը տակաւին պիտի օգնէ քեզի :

« Եթէ խորհէիր թէ երէկ կը մեռնէիր , պիտի վախնայիր » , հարցուեցաւ երիտասարդի մը ասկէ քիչ առաջ : Նա իւր բարձին տակէն առաւ իւր Սուրբ Գիրքը եւ պատասխանեց , « Պիտի չվախնայի մինչ զիտեմ թէ ճշմարիտ է այս գիրքը » :

Մուրթ ձորին մէջ Խօսքը կու տայ լոյս զուարթարար . կը խօսի Անոր վրայ որ կ'ըսէ , « Ես եմ Յարութիւն եւ Կեանք » . եւ կը կարողացունէ զմեղաւորն պատասխանել , « Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտըտիմ , չարէն պիտի չվախնամ » :

վասն զի դուն իմ հետս ես :

Այո , հոս է լոյսը զոր կու տայ Խօսքը ,  
կը խօսի նա Բեթլեհեմի Աստղին վրայ :  
Կը յայտնէ զՆա որ է աշխարհի Լոյսը :

Երբ հոգին կը վրդովի , երբ սիրտը կը  
տխրի , երբ անձկութիւն եւ հոգ կը ճնշեն  
մեր վրայ , երբ մահը մօտ է , տակաւին  
Քրիստոս է ամենաբաւական :

Տէրօջը ձայնը լսեցի .

“Ես աշխարհի Լոյսն եմ .

Եկուր , գիշերդ պիտի անցնի ,

Յորեկդ փայլեցնեմ :”

Եկայ , եւ ան եղաւ ինձի

Արեւ , լուսոյ շրջան ,

Եւ ան լուսով քալեմ պիտի

Մինչեւ ճամբուս վախճանն :

2766

« Ազգային գրադարան



NL0029625

2006

2684